





1665-672

2006

180

# ՇԵՏԱՐԴԻՇ ՏԵՏՐԱԿԵՐ

ԹԻՖ. Է.

զեղիկն հանելու թանագրանքի ու Հալածումի վրայ՝	4
տառափ յարութեանը ու անոր պարագայներուն վրայ	53
հասոսի յարութիւն առնելէն ետեւ երեւնալուն վրայ	53
տառափ մահուանը զօրութիւնը. Ա՞՞?	53
ուշական աղօթք. Ա՞՞	59

ԿԱՍԵՐԳՎԱՐՊՈՒՄ

Ի ՏՊԵՐԵԿԻ Ն. ՏԻ ԲԵՐՈՒԹՈՒ

Ի ՊԱԼԱԹԻԱ

1847



92

22

Ա - 79



5/26 Ա. 2.

Դ-Դամբէր Մամիկոն Գրադապետիք  
Առաջարկադիր  
Առաջարկադիր 19-12-1973 Գրադապետիք

## ԵԱՊՀ ԵՎԻԿԱՆ ՀԵՇԽԱԾՄԱՐՔ

ՈՒ ՀԵՇԽԱԾՄԱՐՔ ՎՐԵՅ

Քրիստոնէ Ավելացնելի հարիւտ պէտք է ո՞ր հասավարութեան  
կանոններ ուղիղացնալու:

Ձեզ որ Քրիստոն աս աշխարհիս մէջ թագաւորութիւն  
մը ունի, ուրեմն անոր հպատակները կառավարելու համար  
անշուշտ կանոններ պէտք են: Առուրք Գիրքին շատ վկայ-  
ութիւններէն ալ յայտնի է թէ Քրիստոն իր Եկեղեցին  
կառավարութեան քանի մը իշխանութիւններ յանձներ  
է, որոնք ժողովուրդին մաքրութիւնը ու կարգը պահելու  
և յանցաւորներուն իրենց պարտքերը ճանչունելու հա-  
մար կանոնաւոր սահմանով մը պէտք է որ գործածուին:  
Եւ որովհետեւ ասիկայ ամենուն յայտնի է, ուստի աւելի  
հաստատելու համար հարկ չէ որ ժամանակ անցունենք:

Վաճեն դարի մէջ Եկեղեցին մէծ վտանգի մէջ ինկաւ,  
երբոր իր յանցաւոր անդամները կառավարելու քուն հոգե-  
ւոր իշխանութիւնը բանի տեղ չ'գնելով անոր տեղը մարմ-  
նաւոր իշխանութիւն գործածեց որ Քրիստոն իրեն ասանկ  
իշխանութիւն մը չ'տուաւ. ու երբոր մարդոց քաղաքական  
իրաւունքներուն վրայ իշխելով իրենց հոգեւոր յանցանք-  
ներուն համար մարմնաւոր պատիժ տուաւ: Արդ ինչպէս որ

1

Հայոց առ ամբողջ

24-8-1973

Հայոց առ ամբողջ

Խօթ. Հայոց առ ամբողջ կ կայ. Տառեկարգութիւն:

Ճշմարիտ է թէ ՚Ք.քիստոս աշխարհի մեջ թագաւորութիւն  
մը ունի, ճշմարիտ է նաեւ թէ անոր թագաւորութիւնը առ  
աշխարհէն չէ: Եւ անոր ծառայներն ալ հոգեւոր թշնամի-  
ներու դէմ ինկվինքնին պաշտպանելու, եւ բռնութիւնով  
առ թագաւորութիւնը տարածելու համար մարմնաւոր զէնք-  
նը գործածելու հրաման չունին. ոչ ալ իշխանութիւն  
ունին իրմէն հոգեւոր յանցանքի համար մարմնաւոր պատիժ-  
տալու: Եւ որովհետեւ կը տեսնանք թէ շատերը չեն դի-  
տեր թէ Եկեղեցին իր Գլուխէն ինչ կերպ կառավարու-  
թեան կանոններ ընդուներ է, ու անոնք ինչպէս պէտք է  
որ գործածէ, ուստի ներկայ տետրակիս մեջ առ նիւթին  
վրայ Առւրբ Գիրքին ըրած վարդապետութիւնը մեր հաս-  
կըցածին պէս խօսինք: Վենք պիտի չ'փնտռենք թէ անցած  
դարերուն սովորութիւնը որն էր, հապա թէ Առւրբ Գիր-  
քը ինչպէս կը սորվեցունէ, քանզի յայտնի է թէ ամենե-  
մին մէկ Եկեղեցին մը կամ առաջնորդի մը ըսածը ճշմա-  
րիտ չէ, թէ որ անիկայ Ըստուծոյ խօսքերուն վրա  
հիմնուած չէ:

՚Ք.քետոսնէ Եկեղեցին դուռած իստուլսրութեան իսնոննէրուն  
վըայ:

Հիմա տեսնանք թէ ՚Ք.քիստոս յանցաւորներուն համար  
իր Եկեղեցին ինչ իշխանութիւն տուաւ: “Եոր Կտակա-  
րանին մեջ առ բանիս վրայ առաջին յիշուած տեղը Անտ-  
թէսի ձ.ր. գլուխն է. “Թէ որ քու եղբայրգ քեզի դէմ  
մեղանչէ գնա յանդիմանէ անիկայ՝ երբոր գուն եւ ան մի-  
նակ էք. թէ որ քեզի մտիկընէ՝ վաստըկեցար քու եղբայրգ  
հապա թէ որ մտիկ չընէ քեզի, քու հետդ մէկ մը կամ եր-

իուք ալ առ, ինչու որ երկու կամ իրեք վկայներուն բեր ամեն խօսք կը հաստատուի: Եւ թէ որ անոնց ալ մը արի չընէ, եկեղեցին ըսէ, բայց թէ որ եկեղեցին ալ մը արի չընէ, ինքը հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ ջնզի: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ երկրի վրայ ինչ որ կարէք՝ երկինքի մէջ կապուած ըլլայ, եւ երկրի վրայ ինչ որ արձկնէք՝ երկինքի մէջ արձկուած ըլլայ": Անդւ. յ.թ., 15-18:

Աս համարներուն մէջ յանցաւորը կառավարելու կանոնին տարբեր աստիճանները յատուկ կերպով մը ցուցուած են. ու թէ որ անոնք աս կերպով դարձի չ'զան, պէտք է որ Եկեղեցին գուրս ձգուին ու հեթանոսներու եւ մաքսաւորներու պէտ ռեպուին: Պէտք է նկատել թէ աս տեղը բանազրանքի համար բնաւ խօսք մը չ'կայ, եւ ասկէց մէկը չ'կրնար հաստատել թէ Քրիստոս իր Եկեղեցին բանազրելու իշխանութիւն տուաւ: Թէ որ ասանկ իշխանութիւն մը տուեր է՝ անիկայ ուրիշ ատեն պիտի ըլլայ, որ ան ալ պիտի ցուցուննենք թէ Եկեղեցին բնաւ ասանկ իշխանութիւն մը տրուած չէ: Առ տեղ անզնզը յանցաւորին դէմ ընելու Քրիստոսի իւրեն ժողովուրդին պիհնտ վերջի տուած իշխանութիւնը աս է, թէ "Անիկայ հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ":

Ուստի մեր երկրորդ քննելու բանը ասիկայ է, թէ աս խօսքը ինչ կը նշանակէ: Եկեղեցին հեթանոսները ու մաքսաւորները կամ չար մարդիկները ինչպէս կը սեպէ: Անիկայ իրեն անդամները ըլլալու համար անոնք անյարմար կը անպէ, անոր համար Եկեղեցին խորհուրդները անոնց չըմատակարարեր, որոնք միայն իր անդամները վայելելու արագութիւն ունին: Ուստի երլոր Եկեղեցին անդամներէն մէկը՝ Քրիստոսի օրէնքին դէմ յանցանք մը ընէ ու չ'զբղչայ; պէտք է որ Եկեղեցին խորհուրդներէն զրկուի ու ոչ անհեց ետեւ անդամ չ'սեպուի:

Բայց մի թէ Եկեղեցին կ'արգիլէ հեթանոսներուն ոչ  
Աստուծոյ տունը չ'մտնան ու Աւետարանի քարոզութիւնը  
լսելու եւ ուրիշ հարկաւոր պաշտօններուն ներկայ գտնու-  
ելու արտօնութիւնները չ'վայելեն, ամենեւին չէ : Հապա-  
լնդհակառակն անիկայ իր դուռները բաց կը պահէ որ ով-  
ովզէ նէ դայ եւ կեանքին խօսքերը լսէ . Վրիստոս ալ  
պատուիրեց իր աշակերտներուն որ երթան ու հեթանոս-  
ներուն եւ բոլոր մարդիկներուն Աւետարանը քարոզեն :  
Ուրեմն հեթանոսները Աւետարանին քարոզութիւնը մը-  
տիկ ընելու արտօնութիւն ունին : Ուստի Եկեղեցին մէջէ  
յանցաւորները որ դուրս ձգուած են ու հեթանոսի պէս  
կը սեպուին , թէ որ իրենք կ'ուզեն՝ Աստուծոյ տունը մըտ-  
նալու արտօնութիւն ունին , ու նաեւ Վրիստոսի հօտին  
չովիթիւններուն պարտքն է որ ջանք ընեն անոնք հոն երթա-  
լու համոզել որ դուցէ դարձի գան : Ուստի թէ որ Եկե-  
ղեցի մը իր դուրս ձգուած անդամները ժողովի մէջ մըտ-  
նալու արտօնութենէն կ'արգիլէ որ Աւետարանի քարոզու-  
թիւնը չ'լսեն , անիկայ աս իշխանութիւնը Վրիստոսին ա-  
ռած չէ :

Դարձեալ մի թէ Եկեղեցին կ'արգիլէ որ իր անդամնե-  
րը հեթանոս կամ չար մարդու մը հաց ու ջուր չ'տան , ու  
անոր հետ առուտուր չընեն , կամ իր ապրուստ ճարելուն  
արգելք ըլլան . չէ , Վրիստոսի ճշմարիտ Եկեղեցին ասանէ  
բան չըներ : Ինչու որ Վրիստոս ինքը բուն մեր թշնամի-  
ներուն համար մեզի կը սորվեցունէ՝ որ եթէ անոնք անո-  
թենան , պէտք է անոնց հաց տանք . ու թէ որ ծարուին  
պէտք է ջուր տանք : Հառովն . ձ. Բ . 20 :

Դարձեալ թէ որ քրիստոնեայ կնիկ մը հեթանոս երիէ  
ունենայ արդեօք Եկեղեցին կը հրամայէ որ անկէց զատուի,  
չէ , Վրիստոսի ճշմարիտ Եկեղեցին ասանէ հրաման չը-

Ներ : Ինչու որ անիկայ կը պատուիրէ որ եթէ եղբայր մը  
անհաւատ կամ հեթանոս կնիկ ունենայ , կամ թէ որ քոյր  
մը անհաւատ կամ հեթանոս էրիկ ունենայ , ու անհաւա-  
տին համելի ըլլայ անոր հետ բնակիլը , հաւատացեալը թող  
անկէց չ'զատուի , կամ անոր չ'ստիպէ որ իրմէն զատուի :  
Ե. Կոբնլ. 1. . 12, 13: Այսպէս իմանալու է նաեւ ծնողաց  
ու զաւկըներու եղբայրներու եւ քոյրերու վրայով :

Դարձեալ միթէ ՞ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին իր ան-  
դամներուն իբրեւ պարտք մը կը հրամայէ որ հեթանոսները  
իրենց կրօնքին համար չարչարեն . մինչեւ անգամ անոնք  
ու անոնց տուները քարկոծեն անիրաւութիւնով բանտը  
գնեն աքսորեն կամ մեսցունեն : Արդարեւ ՞ Քրիստոս իր  
Եկեղեցին ամենեւին ասանկ իշխանութիւն մը չ'տուաւ .  
Բնչու որ բնաւ մէկ բառ մը չ'կայ ՞ Եսոր Կտակարանին մէջ  
թէ Եկեղեցին անհաւատները ՞ Քրիստոսի թագաւորու-  
թեանը մէջ բերելու համար բոնութիւն գործածելու , կամ  
անկէց դուրս մնալնուն համար անոնք պատժելու իշխանու-  
թիւն ունի . հապա ասոր դէմ շատ խօսքեր կան որ բոլոր  
ասանկ բոնութիւնները ամեն կերպով կ'արդիլին : Ուրեմն  
Եկեղեցին մէջէն դուրս ձգուած ու ՞ Քրիստոսի կանոնին  
համեմատ հեթանոսի պէս սեպուած յանցաւորները պէտք  
չէ քարկոծել կամ տուներնին կոխել , ոչ ալ պէտք է ա-  
նոնք բանտը տալ ծեծել աքսորել եւ կամ մեսցունել  
պէտք չէ նաեւ Եկեղեցին միւս անդամներուն պատուիրել  
որ անոնց հետ առուտուր ընեն , ու անոնց հաց եւ ջուր չ-  
տան , կամ անոնց ապրուստ ճարելու միջոցները խափանեն :  
՞ Քրիստոսի Եկեղեցին կրօնքի համար էրիկը կնիկէն կամ  
ծնողքը զաւկըներէն զատելու բնաւ իշխանութիւն չունի :  
Ասիկայ անոնք հեթանոսէ ալ դէշ սեպել մըն է ու ՞ Քր-  
իստոսի կանոնին ալ բոլորովին հակառակ :

Վերը բերուած վկայութիւնին մէջի կապելու եւ արձաւ  
կելու խօսքը յայտնի է որ մեր ըստած կառավարութեան կերպ-  
երուն կը վերաբերի: Երբոր Քրիստոսի Ակեղեցին վե-  
րի կանոնին հետեւելով իր անդամներէն մէկուն համար ար-  
դարութեամբ կը վճռէ թէ պէտք է որ գուրս ձգուի ու հե-  
մանոսի եւ մաքսաւորի պէս սեպուի, ան վճիռը երկինքն  
ալ ընդունելի է: այսինքն երբոր Ակեղեցին Քրիստոսի  
կանոնովը կ'երթայ, իր վճիռը Աստուած ալ ընդունած կը-  
համարուի: Եւ երբոր յանցաւոր անդամի մը հետ մեր Տե-  
րոջը կանոնին պէս վարուելէն ետեւ կը տեսնայ թէ անիկայ  
իր չարութեանը վրայ հաստատ է, ու իր անդամը ըլլալէն  
կը հանէ, ճշմարտապէս կրնայ ըսուիլ թէ բուն Աստուած ան-  
մարդը Ակեղեցիէն հանեց:

Եվեղեցին մէջն յանցաւորնելը իստավայրելու յանոննելուն  
բնուն պէտուառութեանը ու հողապահը:

Տողոր ան կանոնները որ Ակեղեցին իր յանցաւորները  
կառավարելու համար կը գործածէ, անոնց օգուտին համար  
են: Ակեղեցական կառավարութեանն նպատակը Ակեղեցի-  
ին մաքրութիւնը անարատ պահել, ու նաեւ յանցաւորնե-  
րը զղումի բերել է: Պօղոս աս միտքով՝ Եկոպնթ ։ Ե.  
գլուխ ։ 5. համարին մէջ կ'ըսէ, թէ “Անանկը Աստա-  
նային մատնէք”, այսինքն Աստանային թագաւորութեանը  
մատնեցէք, ու անիկայ հեթանոսի պէս սեպեցէք, “մար-  
մինը սատկուելու համար”, այսինքն անոր մարմնաւոր ցան-  
կութիւնները ու փափաքները սատկուելու համար, ինչպէս  
որ միշտ կը յուսանէք թէ անոնց Քրիստոսի Ակեղեցիէն  
դուրս ձգուիլը աս բաններուն շատ աղքուութիւն կ'ընէ: Աս-

աշխարհիս մէջ երկու թագաւորութիւն կայ . ՚Քրիստոսի թագաւորութիւնը ու Աստանային թագաւորութիւնը , ուստի երբոր մէկը ՚Քրիստոսի թագաւորութենէն դուրս կը ձգուի , անիկայ իշարկէ Աստանային թագաւորութեանը կը մատնուի . կամ ինչպէս որ Շոռաքեալը կ'ըսէ , “ Աստանային կը մատնուի ” : Եւ բոլոր ասանկ պարագայներու մէջ Եկեղեցիին յոյսը միշտ ան է որ դուրս ձգուած մարդը ասանկով իր մարմինին , այսինքն իր մարմնաւոր փափաքներուն համար ունեցած գէշ ընթացքին վրայ մտմասյ , ու ճշմարտապէս դարձի դայ , եւ այսպէս իր երկրաւոր անդամները սպաննէ : ( Հայով . թ . 13 . Կու . գ . 5 . ) որ իր մարմնաւոր փափաքներուն կորսուելովը իր հոգին ապրի Տէր Ծիսու ՚Քրիստոսի օրը :

Եկեղեցին կառավարութեան դիտաւորութիւնը ու նըստատակը աղէկ հասկընալու համար՝ կարդա Ն . Կորնթացւոց Եերորդ գլխուն մէջի մարդուն պատմութիւնը . ու ետքը անոր եղածը տես Ի . Կորնթ . Ի . գլուխ . 6 , 7 , համարներուն մէջ : Են մարդը՝ որուն վրայով հոն գրուած է , Եկեղեցիին անդամ էր , ու մեծ գայթակղութիւն տուող յանցանք մը ըրեր էր . եւ ասոր համար Պօղոս Առաքը Հոգիին ազգեցութիւնովը հրաման ըրաւ թէ պէտք է որ անիկայ “ Աստանային մատնուի ” , այսինքն ՚Քրիստոսի թագաւորութեանը արտօնութիւններէն զբկուի ու Աստանային թագաւորութեանը մատնուի . աս յոյսով որ շուտով զղայ ու իր մարմնաւոր փափաքները ու ցանկութիւնները սպաննէ ու Տէրոջը գտուայ : Ենիկայ Պօղոսէն կամ Կորնթոսի Եկեղեցիէն չ'բանազրուեցաւ , ինչու որ անոր “ Աստանային մատնուիլը ” չէ թէ ան միտքով էր որ բոլորովին կործանի , հապա “ Որ հոգին փրկուի մեր Տէր Ծիսու ՚Քրիստոսի օրը ” : Ենիկայ միայն Եկեղեցիին խորհուրդներէն զրկեցին , ու

Աւատանացին թաղաւորութեանը իբրեւ մէկ հպատակը, այս  
մինքն հեթանոսի ու մաքսաւորի պէս սեպեցին : Եւ կը-  
տնանակը որ Եկեղեցին հոգեւոր կառավարութիւնը աս-  
քանիս մէջ ճիշտ իր նպատակին հասաւ, ան մարդը շուտով  
զլչաց . ու երբոր Պօղոս Կորնթոսի Եկեղեցին երկրորդ  
Նամակ մը գրեց, անոր մէջ ըստ անոնց որ ներեն, ու ան  
զգացող եղայրը միսիթարեն ունորէն ընդունին, “Որ չը-  
ւայ թէ անիկայ աւելի տրտմութենէն ընկղմի” : Ի Կոդնէ .  
1 . 7 .

Եկեղեցին դուքս հանելու ուրիշ օրինակ մըն ալ ճիշտ  
աս կերպովք, և Տիմ . Ա . Գլ . 20, համարին մէջը կայ-  
ուր տեղ Պօղոս կ'ըսէ թէ ինք Հիմենոսը ու Վղեքսանդ-  
րոսը “Ատանային մատներ է, որ սորվին հայհոյութիւն  
չընել” : Ծատ յայտնի է որ ասիկայ ըսել չէ թէ Պօղոս  
ան մարդիկը նզովեց, երբոր Եկեղեցին մէկը կը նզովէ ը-  
սել է թէ ան մարդուն վրայ ժամանակաւոր ու յաւիտե-  
նական անէծք կը թափէ . ըսել է թէ ան մարդը յաւիտեա-  
նըս յաւիտենից Ատանային թագաւորութեանը կը մտանէ:  
Ուայց Պօղոս ան մարդիկը Եկեղեցին անդամներուն վայ-  
րած արտօնութիւններէն զրկելով՝ միայն Վրիստոսի տե-  
սանելի թագաւորութենէն զատեց ու Ատանային տեսանե-  
լի թագաւորութեանը մատնեց որ Վրիստոսի Եկեղեցին  
մաքրութիւնը պահուի : Ու նաեւ յուսալով որ անոնք  
Ճանշան իրենց բոնած ճամբուն սխալ ըլլալը ու անկեց  
գառնան “Որ մեր Տէր Յիսուս Վրիստոսի օրը փրկութին” :

Արդեւս ուրիշ միայնութեան յը կայ Առաջն Գելքան մ-ջ որ իւ-  
հասպատի լ-է ։ Ք-ը կասուս էր Ե-լ-դ-ց իւն առրտի բանադրելո-  
լշանառութեան պատաս:

Ոինչեւ հիմա մեր ըրած քննութիւններէն յայտնի ծ-  
րեւաց թէ ։ Ք-ը իսոսոս իր Եկեղեցին մարմաւոր պատիճ  
տալու կամ բանալրանքի իշխանութիւն տուած չէ : Ի-այց  
թէ որ հարցուի թէ չէ՝ որ Պօղոս քանի մը յանցաւորներ-  
ու համար “նզովեալ ըլլան” ըստաւ : Կը պատասխաննենք  
թէ Ա.յո՞ւ արդարեւ ըստաւ, ու երանի թէ նոյն գլխուն քա-  
նի մը համարները՝ որոնց մէջ աս խօսքը գրուած է, աշխարհ-  
իս մէջի ամեն Եկեղեցիներուն դրանը վրայ ոսկեղօծ գրեր-  
ով փորուեին . “Ի-այց թէ որ մենք՝ կամ երկինքէն հը-  
րեշտակ մը մեր քարոզածէն աւելի աւետարանը քարոզել-  
ու ըլլայ ձեղի, նզովեալ ըլլայ: Խնչպէս որ առաջ ըսինք, հի-  
մա ու նորէն կը զրուցեմ: Թէ որ մէկը ձեր առածէն աւելի՝ ա-  
ւետարանը քարոզելու ըլլայ ձեղի, նզովեալ ըլլայ”: Գառղ. 1.։  
8, 9 : Ա.ս տեղս Ա.ս.քեալը Առերբ Հոգիով լեցուած սոսկալի  
դատապարտութեան կը մասնէ ան մարդը՝ որ յայտնուածէն  
ուրիշ աւետարան քարոզելու կը համարձակի: Եւ ամեն քա-  
րոզիչ ու ամեն Եկեղեցի պարտական է աս սոսկալի վճիռը  
միարը պահիլ եւ ամեն ատեն մարդոց յիշեցունել, “թէ  
եւ երկինքէն հըրեշտակ մը ուրիշ աւետարան քարոզելու  
ըլլայ, նզովեալ ըլլայ”: Ի-այց մէկ մէծ տարբերութիւն մը  
կայ աս նզովքին՝ ու քանի մը Եկեղեցիներուն իրենց յան-  
ցաւոր կարծած անդամներուն դէմ ըրած նզովքին մէջ: Ա-  
ռաքեալին խօսքը բուն Աստուծոյ մեզի սպառնացած սոս-  
կալի նզովքն է, որ միայն Անիկայ իշխանութիւն ունի նը-  
զովելու: Աստուծած աս իշխանութիւնը մէկ ատեն մը իր արա-  
բածներուն չէ տուեր, հապա ընդհակառակը յայտնի արգի-

չիր է : Անիկայ իր ժողովուրդին հրաման կ'ընէ որ օրհնեն  
ու չէթէ անիծեն : Հասկէ Ժ. Ժ. 14 : Անոր պաշտօնեայնեւ-  
րը իշխանութիւն ունին՝ ինչպէս որ Առաքեալները ըրին,  
իր անօւնովը մարդիկներուն ծանուցանել թէ ամեն ով որ  
Առաքեալներուն քարոզածէն ուրիշ աւետարան կը քարո-  
զէ, անիկայ թէ որ Կահանայ Եպիսկոպոս Պատրիարք  
Առաքեալ կամ թէ որ երկինքէն Հրեշտակ մըն ալ է, նը-  
զովեալ ըլլայ : Բայց ինչպէս որ Պօղոս աս նզովքը յա-  
տուկ մէկու մը համար չըսաւ, ասանկ ալ Եկեղեցին իրաւ-  
ունք չունի մասնաւոր մարդիկներ որոշել եւ անոնց նզովք  
կարգալ : Աստուած Հայոք բոլոր դատաստանը Որդին  
տուաւ, բայց մարդիկներուն բնաւ իշխանութիւն մը չ'տու-  
աւ որ իրենց ընկերներուն սիրտերը քննեն ու անոնց դատ-  
ապարտութեան վճիռ տան : Ուէ որ մէկը աս նիւթիս վը-  
րսս քիչ մը խորհի դիւրաւ պիտի իմանոյ ան մեծ տարրեր-  
ութիւնը . երբոր Կրիստոսի պաշտօնեայն կ'ըսէ, “Ասո-  
ւած կընզովէ ան ամենը՝ որ իր աւետարանը կը խանգա-  
րեն” . եւուրիշ մը կ'ըսէ, “Ես Աստուծմէ առած իշխանու-  
թիւնովս կընզովեմ աս կամ ան մարդը, ինչու որ անոր  
քով հերետիկոսութիւն կը տեսնամ” : Աստուած իր արա-  
րածները նզովելու արտօնութիւնը իրեն կը պահէ երբոր  
անոնք ասանկ դատապարտութեան արժանի տեսնայ, ու ա-  
մենեւին մարդու մը կամ Եկեղեցի մը աս իշխանութիւնը  
տուած չէ : Եւ ով որ ասիկոյ ընելու կը համարձակի, ինք-  
նքինքը Աստուծոյ տեղը դնելու կը յանդգնի, ու բուն ինքը  
ուրիշներուն վրայ հայհայութեամբ ըրած անէծքներուն տա-  
կը յաւիտեան թաղուելու վտանգին մէջն է :

Հիմա հոս Առւրբ Կիրքին քանի մը ուրիշ համար-  
ներուն վրայ ալ քննութիւն ընենք, որոնք երբեմն  
վկայութիւն կ'առնուին թէ Եկեղեցականները չար

ու հերեաիկոս մարդիկը նզովելու իրաւունք ունին :  
 Ոմանք կը հարցունեն թէ չէ որ Ենանիա ու Ասփիրան  
 Սուրբ Հոգիին դեմ սուտ զբուցելնուն համար Պետրոս ա-  
 ռաքեալէն անինուեցան , (Գործ . Ե . 1-11,) ու անոր հա-  
 մար ինկան ու մեռան : Եւ չէ որ Եղիշմաս մոդը (Գործ . Ժ . 10.) ճշմարտութեան դեմ կենալուն համար Պօղոսէն անին-  
 ուեցաւ , ու անոր համար կուրութեամբ զարնուեցաւ : Ճնէ  
 որ ասիկայ հարցունողը յանձն առնէ զգուշութիւնով առ  
 համարներուն նայիլ , պիտի տեսնայ թէ ոչ Պետրոս եւ ոչ աք  
 Պօղոս մէկը անինեցին , կամ պահանջեցին թէ իրենք  
 մարդիկ նզովելու իշխանութիւն ունին : Եսոր վրայ բնաւ-  
 տարակոյս չ'կայ թէ Եստուած ունի իրաւունքը ով որ ու-  
 զէ բանաղբելու . անիկայ ով որ ուզէ կուրութեամբ զար-  
 նելու , եւ ով որ ուզէ մեսցունելու իշխանութիւն ունի  
 միա կը մնայ մեզի հարցունել թէ Եստուած աս իշխան-  
 ութիւնները երբէք մարդու տուածէ , բնաւ մէկը թէ Վա-  
 հանայ թէ Եպիսկոպոս թէ Պատրիարք եւ թէ Պապը ար-  
 դեօք իշխանութիւն ունի ըսելու , “Եստուած անունովը ու  
 իշխանութիւնովը այս ինչ կամ այն ինչ մարդը կը նզովեմ” :

Ա երի դիպուածներուն մէջը կը տեսնանք որ Պետրոս ու  
 Պօղոս ասանկ խօսք մը կամ ասանկ իշխանութիւն մը չը-  
 գործածեցին : Պետրոս Ենանիան իր մեղքին համար միայն  
 յանդիմաննեց ըսելով , “Չէ թէ մարդու , հապա Եստուածոյ  
 սուտ խօսեցար . եւ Ենանիա աս խօսքերը որ լսեց ինկաւ ու հո-  
 գին հանեց” : Գործ . Ե . 4, 5: Եսիկայ Եստուածոյ պատիմն էր  
 որ անոր մեղքին համար խրկուեցաւ , եւ Եստուածային վը-  
 րէմն էր որ անկէց առնուեցաւ . Եռաքեալին անէծքովը եւ  
 զած բան մը չ'կար , ինչու որ անիկայ ասանկ անէծք մը չը-  
 տուաւ : Ասփիրայի դիպուածին մէջ Եռաքեալը իրաւու-  
 նէ ըսաւ անոր թէ իր մեղքին համար ինք ալ էրկանը պէտ

պիտի մեռնի . բայց միայն մարդարէութիւն մըն էր ու չէ թէ նզովել . Առաքեալին բերնէն անէծքի վերաբերեալ բառ մը չելաւ : Եղիմաս մոգին գիտուածին մ.ջ (Գ.ր.ջ . ձ.Գ. , 9-11,) Պօղոս “Առուրը Հոգիով լեցուած” անիկայ սաստիկ յանդիմանեց Աստուծոյ դէմ կենալու սոսկալի մեղքին համար , ու Աստուծմէ անոր գալու պատիժին համար ալ մարդարէութիւն ըրաւ : Պօղոս բնաւ անանկ խօսք մը չէր ըսեր ինչպէս որ աս ատենիս եկեղեցականներէն ոմանք կ'ըսե՞ն՝ “Ես Աստուծածային իշխանութիւնովս հոգիով ու մարմին ու քեզ կ'անիծեմ”, եւսյլն : Բնաւ անէծքի խօսք մը անոր բերնէն չէր ելար , հապա միայն մարդարէական հոգիով Աստուծմէ գալու պատիժը կ'իմացունէր , որ աս կարող ութիւնը Անրդարէներէն եւ Առաքեալներէն զատ մէկը չունէր՝ որոնց Առուրը Հոգին կ'իմացունէր : Ոճէ օր մէկը իրեն համար կ'ըսէ թէ աս կարողութիւնը ունի , թող ինք ալ առաքեալներուն պէս հրաշքով մը անոր իրաւ ըլլալը ցուցունէ . բայց տակաւին անիկայ մէկը անիծելու իշխան ութիւն ունեցած չըլլար :

Ոճէ օր մէկը ասոր պատասխանէ թէ հիմակուան Եկեղեցականները մարդ չեն անիծեր , հապա միայն Աստուծոյ անէծքը ան մարդուն վրայ ըլլալը կ'իմացունէն : Ասոր դէմ մենք ալ պատասխան կուտանք , երբոր Պօղոս մարդարէական Հոգիով իմացուց թէ Աստուծոյ պատիժը Եղիմաս մոգին վրայ պիտի իջնայ՝ կը տեսնանք որ շուտով եղաւ , ու ան կէտին անոր աչքերուն մշուշ ու խաւար իջաւ : Բայց հիմակուան Եկեղեցականները որոնք կը պարծենան թէ Պօղոսին ունեցած իշխանութիւնը իրենք ալ ունին , երբեմն շարաթներով ամիսներով ու տարիներով մարդ կը բանազրեն ու տակաւին անոնց պատիժ մը չ'գար : Աստուծ Եկեղեցականներուն անէծքովք մէկը չ'նզովել ու չ'պատժեր ,

եւ անիկայ կըր կաղ համբ կամ խուլ չ'ըներ : ովյլ ընդ +  
հակառակը շատ անգամ կը տեսնանք որ ան մարդիկը  
առ բաներուն փոխարէն միշտ կ'օրհնուին : Եւ ահա առ  
փաստն ալ ոչինչ ելաւ, ու մէ կը պէտք չէ հաւտայ թէ մարդ +  
իկ ։ Աստուծմէ ասանկ իշխանութիւն մը առած են, զամնզի  
կը տեսնանք որ իրենց ըսած խօսքերը բնաւ չեն կատարուիրա

Առւրբ Գիրքին մէջ քանի մը ուրիշ խօսքեր ալ կը դըտ-  
նուին, որոնք երբեմն վկայութիւն կ'առնուին թէ լրկեղե-  
ցականները մարդիկ բանադրելու իրաւունք ունին : Շրացին  
վկայութիւնը ։ Հովհաննու 10, 11 համարներն են, “ թէ ոք  
մէ կը ձեզի գայ ու աս վարդապետութիւնը չունենայ ” անի-  
կայ տուներնիդ մի ընդունիք, եւ բարեւ մի տաք անոր : Ով-  
որ բարեւ կ'ըսէ անոր չար գործքերուն հաղորդ կ'ըլլայ ” :

Իսայ պինտ առաջ պէտք է որ քննենք թէ աս տեղը  
գրուածները ինչ աստիճանի մարդիկ են : Լոթներորդ հա-  
մարէն յայտնի է որ ՚Վրիստոսի մարդկութիւնը ուրացող  
տուտ հաւատք քարոզողներն են, ու Շոաքեալը քրիստոն-  
եայներուն կը պատուիրէ որ ասանկ մարդիկ իրենց տունե-  
րը ընդունին, ոչ ալ ինչ եւ իցէ կերպով անոնց բարեկամ-  
ութիւն մը չ'ցուցունեն, որ չըլլայ թէ ասանկով իրենց  
սիսալմունքը տարածելու ուժ առնեն : Իսայ թէ որ աս մարդ-  
իկներէն մէ կը անօթութենէն շատ նեղը ինայ, արդեօք  
Շոաքեալին մեղի ըրած պատուէրին մէջ անանկ խօսք մը  
կայ թէ պէտք չէ որ անոր հաց տանք, քաւ լիցի : Ինչու որ  
տափկայ Շոտուածային հրամանին բուն դէմ եղած կ'ըլլայ,  
որ կ'ըսէ “ թէ որ քու թշնամիդ անօթեցեր է, հաց տուր  
անոր, եւ թէ որ ծարաւ է՝ ջուր տուր անոր ” : Հառնվ. Ժ. 20:

Երկրորդ պէտք է քննենք թէ արդեօք աս պատուէրին  
մէջ Շոաքեալին ճիշտ միաքը ինչ է : Շատ յայտնի կ'ե-  
րեւայ որ անոր դիմաւուրութիւնը աս է, թէ պէտք չէ ա-

հասկ բան մը ընենք որ ուրիշներուն կարծիք տանք թէ մենք  
սուտ վարդապետներուն ուժ կուտանք, ու իրենց գործը առ  
ուաջ տանելու համար սիրտ կուտանք ու օգնութիւն կ'ը-  
նենք: Բայց մեր վրայ մէկը ասանկ կարծիք մը չ'կրնար ը-  
նել, երբոր անոնց անօթի եզած ատենը քիչ մը հաց տանք  
կամ հետերնին խօսինք եւ կամ ուրիշ ինչ եւ իցէ ասանք  
քան մը կամ առուտուր մը ընենք անոնց հետ, ինչպէս որ  
հասարակօրէն ուրիշ մարդոց հետ կ'ընենք:

• Քրիստոնի աշակերտները ինչ իւրառով չ'ու հերետիկո հորդ-  
իներն նուղանակն հետու որուհելու են:

Վասքեալին աս հրամանը (Ղ. Յակ. 10, 11,) մեղի ըս-  
տատուիրեր որ մեր ընկերին դէմ անգիտութիւն կոպիտու-  
թիւն կամ անքաղաքավարութիւն ընենք անօր օխալ կը-  
րօնք ունենալուն համար. ինչու որ ասանկ ընելով Վատու-  
ծոյ միւս հրամանները ոտքի տակ առած պիտի ըլլանք:  
Վասքեալը մեղի կը յորդորէ, թէ քանի որ ժամանակը ձեռք-  
երնիս է, աղէկութիւն ընենք ամենուն. Գաղ. 9. 10.  
Մեղի կը պատուիրէ որ բարի բաներու ետեւէ ըլլանք մէջ  
մէկու հետ ու ամենուն հետ. Ղ. Թօես. 1. 15: Ետեւ մեղի  
ըստած է թէ ան ամենուն որ ձեղմէ կ'ուզեն՝ տուէք, եւ թէ  
ինտոր կ'ուզեք որ մարդիկ ձեղի ընեն, անանկ ըրէք զուք  
ալ անոնց. Ղ. սուկ. 9. 30, 31: Մեղի պատուէք կայ որ մեր  
թշնամիները՝ անգամ, սիրենք, եւ բարի ընենք անոնց որ  
մեղ կ'ատեն: Անդ. 1. 44: Ու նաեւ մեր Տէրը կը հարց-  
ունէ ըսելով թէ որ ձեր բարեկամներուն միայն բարե-  
տաք, ինչ աւելի կ'ընէք ուրիշներէն: Անդ. 1. 47:  
Ու որ սատ վարդապետ մը դայ եւ ուզէ որ զինքը մէջ

տունը առնենք ու իրեն հետ մտերիմ բարեկամութիւն ըն-  
նենք, որ մեր միջոցով իր սխալմունքը ժողովուրդին մէջ  
տարածէ, ան ատենը անշուշտ մեր պարտքն է որ Առաքեալ-  
ին հրամանին պէս անիկայ չընդունինք: Իսյց ըսենք թէ  
քրիստոնեայ կնիկ մը տեսնայ որ իր էրիկը ասանկ սուտ  
քարոզիչ մը սխալ վարդապետութիւնները ընդուներ է,  
արդեօք անիկայ պարտական է՝ Առաքեալին աս խօսքէն,  
անկէց զատուիլ ու իր էրիկը տունէն վորնտել, քաւ լիցի:  
Առաքեալին միտքը բնաւ տափկայ չէ. եւ Սուրբ Գիրքին  
մէջ ասանկ բան ընելու ամենեւին վկայութիւն չ'կայ, հա-  
պա բուն ասոր հակառակը կը տեսնանք որ Կրիստոսիր կա-  
նոններովը ասանկ բանները ստատիկ կ'արգիլէ: Պինա առաջ  
որ ամեւսնութեան կապը բոլոր կեանքին մէջ մէկ տեղ ապ-  
րելու համար է, ու շնութենէ զատ ուրիշ պատճառ մը կամ  
երկրիս վրայ ինչ եւ իցէ իշխանութիւն մը չ'կրնար աս կա-  
պը քակել: Աստուած էրիկը ու կնիկը մէկ մարմին ըրաւու  
պատուիրեց՝ թէ և ինչ որ Աստուած միաւորեց, մարդը թող  
չ'զատէ”: Անպէ. Ժ.Ձ. 6: Եւ երկրորդ որ բուն աս բան-  
իս համար Առաքելական կանոնը ունինք, Ե. Կորնթ. 1: 4լ.  
12-17 համարներուն մէջ, ինչպէս որ վերցուցուցինք երես։  
Յ. Ա. կանոնին մէջը Պօղոս կը հրամայէ որ եթէ եղբայր մը  
անհաւատ կնիկ ունենայ, կամ թէ քոյր մը անհաւատ է-  
րիկ ունենայ, անոնք աս պատճառիս համար իրարմէ չ'զատ-  
ուին. այսինքն թէ անհաւատին հարկ չ'դրուի որ իրմէն  
զատուի, հապա թող տրուի անոր հետ բնակիլ թէ որ կ'ու-  
զէ: Ու աս կանոնը ամեն տեսակ մարդիկներուն համար ալ  
է, այսինքն թէ անհաւատ ըլլայ թէ հեթանոս թէ հրէայ  
եւ թէ մոլորեալ քրիստոնեայ: Ա. նիւթիս վրայ տես նա-  
եւ, Ա. Պետ. Վ. 4. գլ. 1, 2, համարները, ուր տեղ Առաքեալ-  
իը պատուիրէ կնիկներուն որ հեազանդ ըլլան իրենց էրիկնե-

բառ, թէ որ անոնք Աւետարանին հնազանդ չըլլան այս  
Ու նաեւ թէ որ մէկը զաւակ մը ունի որ սխալ վարդա-  
պետութեան ետեւէ կ'երթայ, Վոաքեալին հրամանը բնաւ-  
ըսել չէ թէ պէտք է որ անիկայ տունէն դուրս ընէ: Վմեն  
մարդ գիտէ եւ կը խոստովանի թէ ամեն ծնօղք բնական եւ  
Վոտուածային օրէնքով պարտական է իր զաւկըներուն հոգ  
տանիլ, եւ մարդ մը աս օրէնքին հնազանդելով ծուռ վազ-  
դապետութիւն ընդունող զաւակը իր տունը պահելուն հա-  
մար՝ մէկը իրաւունք չունի ըսելու թէ անիկայ աս բանը ը-  
նելով անոր սխալմունքի մէջ մնալուն օգնութիւն ըրած կ'ըլ-  
լայ: Վանաւանդ թէ ճշմարիս քրիստոնեայ ծնօղք մը երբ-  
որ կը տեսնայ թէ զաւակը սխալմունքի մէջ է, բնաւ չու-  
ղեր որ անիկայ իր հայրական խնամքէն հեռանայ որ գուցէ  
անոր սխալմունքը շտկուի: Վոաքեալին աս պատուերին մէջ-  
էն բնաւ աս միտքը չելլար թէ ասանկ պարագայի մը մէջ  
ծնօղքը պարտական է իր զաւակը տունէն դուրս ընելով բը-  
նականին դէմ գործել:

Աւրիշ մէկ քանի վիսյութիւններ ալ կան, որոնք մի եւ  
նոյն դիտաւորութիւնը ունին, ու թէ որ անսնցմէ մէկիննը  
շանակութիւնը շիտակ հասկընանք միւս ամենն ալ կը հաս-  
կընանք, որոնք աս հետեւեալներն են:

“Գիտնաք անանկները՝ որ ձեր սորված վարդապետութե-  
նէն դուրս հերձուածողութիւն ու գայթակղութիւն կ'ընեն,  
եւ անոնցմէ ետ կեցէք”:  
Հատուկ, Ժ. 9. 17:

“Գրեցի ձեզի . . . որ պոռնիկներուն հետ չ'խառնուիք . . . .  
թէ որ մէկը եղբայր ըսուած կամ պոռնիկ ըլլայ կամ կը-  
ուապաշտ կամ ազահ կամ բամբասող կամ գինով կամ յա-  
փշտակող անանկին հետ հաց ալ ուտելու չէ”:  
Ե. Առանք, Ե. 9, 11:

“Այս պատուիքնմ ձեզի եղբայրներ . . . ոք եա քաշուիք

ան ամեն եղասլիներէն՝ որոնք անկարգութիւնով կ'երթան”:  
Եւայլն : Ը թէն . զ . 6 :

“ Ու որ մէկը չ'հաղանդիր մեր խօսքին ատ թուղթովը,  
զուգ նշան դրէք անոր, ու անոր հետ մի խառնուիք որ ա-  
մբշնայ : Բայց ըըլայ թէ թշնամիի պէս սեպէք անիկայ .  
Հապա եղօր պէս խրատեցէք ”: Ը թէն . զ . 14, 15 :

“ Ա երձուածող մարդէն մէկ կամ երկու անդամ խրատել-  
էն ետեւ ետ քաշուէ ”: Տէս . զ . 10 :

“ Վ ս դիտցիր՝ որ ետքի օրերը չար ժամանակներ պիտի  
գտն . ինչու որ մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթա-  
սէր, հպարտ, ամբարտաւան, հայհոյիչ, ծնողաց անհաւան,  
ապերախտ, անսուրը, տմարդիներ, անգութներ, բանօարկ-  
ուներ, անհամբերներ, բարձրամիտներ, բարին չ'սիրողներ,  
մատնիչներ, յանդուգներ, գոռողներ, եւելօք ցանկութիւն  
սիրողներ քան թէ Վ ստուած սիրողներ, որոնք Վ ստուած-  
պաշտութեան կերպարանքը ունին եւ անոր զօրութիւնը ու-  
րացած են, եւ գուն անոնցմէ մէկ զի կեցիր ”: Ը Տէ . զ . 15 :

“ Ու կցորդ մի ըլլաք խաւարին անպտուղ գործքերուն,  
Հապա եւելօք յանդիմանեցէք ”: Ե թէն . Ե . 11 :

Հողոր աս վկայութիւններուն մէջ քանի մը տեսակ մարդ-  
իկ յիշուած են, որոնցմէ քրիստոնեայններուն պարտքն է  
մէկ կերպով մը զատուիլ, որ աշա պիտի քննենք թէ ինչ  
կերպով ու ինչ բաններու մէջ հեռու կենալու են : Յայտնի  
է որ չէ թէ անոնց հետ խօսելէն հեռու պիտի կենան, ինչ  
չու որ իրենց պատուէր կայ որ անոնք եղօր պէս խրատեն  
( Ը թէն . զ . 15 ) ու յանդիմանեն . ( Ե թէն . Ե . 11 . ) ուս-  
տի անոնց հետ ամեն տեսակ հաղորդակցութիւն ընելը ար-  
գիլուած չէ : Յայտնի է նաեւ որ քրիստոնեայները պիտի  
չաշխատին անոնց անձերուն կամ ունեցած վլճակին վես  
մը հասցունելու . ինչու որ ասիկայ անոնց հետ թշնամիի պէս



վարուիլ է, որն որ արդիլուած է: Տ. թ. Ես. գ. 15: Ա-  
նոնցմէ ետ կենալու պատուէրը, նախ՝ անոնք Խկեղեցին հա-  
զրդութենէն զատելն է: Եւ աս ալ պէտք է որ Քրիստո-  
սի ըսած կանոնին պէս (Ուտթ Ճ.Ռ.) ըլլայ ինչպէս որ վե-  
րը բացատրեցինք: Ն նացողները, ագահները, կռապաշտ-  
ները, բամբաստղները, դիմովները, յափշտակողները պէտք  
չէ թող տալ որ քրիստոնեայներուն հետ Տէրոջը սեղանէն  
հաղորդութիւն ընեն: Եւ երկրորդ քրիստոնեայները պէտք  
չէ որ անոնց հետ պտրախն, իբրեւ թէ անոնց բռն ըն-  
կերներն են. Եւ կամ հետերնին անանկ հաղորդութիւն  
մը ընեն որ անոնց չարութեանը համախոհ ըլլալու կամ  
իրաւունք տալու պէս երեւնան. Հապա առաւել պէտք է  
ասանկ ընկերութենէն փախչին որ անոնք ամշնան: Տ. թ. Ես.  
գ. 14:

Ձևէ որ մէկը հարցունէ՝ արդեօք Վատուծոյ ժողովուրդը  
պէտք է որ ասանկ մարդոց հետ առուտառւ կամ ութիշ  
գործ մը ընէ։ Պատասխան կուտանք թէ բոլոր վերը յիշ-  
ած վկայութիւններնուս մէջ, կամ թէ Վատուծոյ խորին  
ուրիշ ինչ եւ իցէ համարներուն մէջ բառ մը չ'կայ որ աս  
բանը արդիլէ։ Վսկէց կը հետեւի թէ աշխարհիս վրայ ա-  
մեննեւին մէկ եկեղեցական իշխանութիւն մը ասիկայ արդի-  
լելու իրաւունք չունի։ Ծմբնք թէ ես բան մը ծախու առ-  
նելու համար հեթանոսի մը խանութ երթամ, ասկէց կրնա՞յ  
մէկը իր միտքովլը կարծել թէ ես հեթանոսութիւնը կը-  
հաստատեմ։ Ձևէ որ Հրէայի մը հետ առուտառւ ընեմ, ար-  
դեօք ես կը սեպուիմ թէ Հրէութիւնը տարածելու օգնու-  
թիւն կ'ընեմ։ Կամ թէ որ անհաւատի մը հաց ծախեմ,  
աս ըրածիս համար մի թէ ես անհաւատութեան ջատագով  
կամ բարեկամ եղած կ'ըլլամ։

Հայց ոմանք կը հարցունեն՝ թէ չէ որ Պօղոս տուածաւ.

քրիստոնեայներուն պատուիրեց որ հերետիկոսներուն հետ  
հաց ալ չուտեն : Ե. Կոբեն . ւ . 11 : Առոր կը պատասխան  
ենք թէ շատ մարդիկներ՝ որոնք Առւրբ Գիրքին մեկնու-  
թեանը աղէկ ծանօթութիւն ունին, աս համարին միտքը՝  
հաղորդութեան սեղանէն մէկ տեղ չուտելը կը հասկընան : Եւ  
թէ որ նոյն զլսուն 7 եւ 8 համարները նայինք պիտի տես-  
նանք որ աս մեկնութիւնը շատ հաւանական է : Առաքեալը  
կը ստիպէ քրիստոնեայներուն որ Կ. քրիստոսի հաստատած  
տօնը կաստարելու համը մեղքին հին խմորը մէկդի մաք-  
րեն, ու անանկ Կ. քրիստոս իրեւ իրենց համար մորթուած  
զատիկը ընդունելու պատրաստ ըլլան : Ասկէց կ'երեւայ թէ  
Պօղոս հաղորդութեան հացը ըսել կ'ուղէ, երբոր 11 հա-  
մարին մէջ բոլոր ան կերպ գէշ բնութիւն ունեցող մարդ-  
իկը համրելով քրիստոնեայները կը զգուշացունէ որ անոնց  
հետ հաց ալ չուտեն : Ոնանաւանդ թէ Կոր Կտակարանին  
քանի մը ուրիշ տեղերէն ալ յայտնի է որ ‘ուտել’ բառը  
ճիշտ աս կերպով հաղորդութիւն առնելու տեղ գործած-  
ուած է : Տես . Պատմ . 1 . 42 : 1 . 7 : Ե. Կոբեն . ձ. Ե. . 33 :

Բայց ըսենք թէ Պօղոսի խօսքը բնաւ հաղորդութեան  
վերաբերութիւն մը չունենայ, հապա միսյն հասարակ հաց  
ուտելը նշանակէ, ան ատենը աս համարին նշանակութիւնը  
ինչ կ'ըլլայ : Ենիկայ ամենեւին հերետիկոսութեան չ'վե-  
րաբերիր, հապա միսյն անառակութեան : Պօղոս Կորնթա-  
ցի քրիստոնեայներուն միսյն կը պատուիրէ որ ետ կենան  
անանկներէն՝ որոնք Եկեղեցիին անդամները ըլլալով ինք-  
զնիքնին սաստիկ անառակութեան կուտան . ինչպէս պոռ-  
նկութեան, ագահութեան, կոապաշտութեան, բամբասան-  
քի, գինովութեան եւ կամ յափշտակութեան, ու նաև  
կը զգուշացունէ որ անանկներուն հետ հաց ալ չուտեն : Ու  
իրաւցունէ քրիստոնէի մը անարդութիւն է որ ասանկ մար-

դոց սեղանը երթայ նստի , եւ կամ անոնք բարեկամներու պէս իր սեղանը հրաւիրէ :

Դարձեալ աս համարը ամենեւին չցուցուներ՝ թէ քը քիստնեայ ծնողք մը երբոր ասանկ անառակ տղայ մը ունենայ պարտական է անիկայ տունէն դուրս ընել . կամ կը նիկ մը թէ որ ասանկ էրիկ ունենայ պարտական է անկէց զատուիլ : Պօղոսի աս խօսքերէն մէկը չ'կրնար ասանկ միտք մը հանել , ինչու որ ան ատենը Առւրբ Գիրքին մէջի խօսքերը իրարու դէմ գրուած կ'ըլլան : Եշրկան եւ կնկան , ծը նողքի ու զաւակի մէջ եղած կապակցութիւնը մնայուն կապակցութիւն մըն է . եւ Քրիստոս ինչ եւ իցէ իրաւունքով անիկայ քակելու համար բնաւ տեղ մը իր Եշրեղեցիին իշխանութիւն տուած չէ : Արդարեւ շնութեամք բռնուողին համար թող կուտայ որ միւսը թէ էրիկը ըլլայ եւ թէ կը նիկը ան յանցաւորը իրմէն արձրկէ . բայց ամենեւին չ'ըրբամայեր որ անշուշտ ասանկ ընեն . ուստի Եշրեղեցիին ալ իշխանութիւն մը չէ տուեր որ ասանկ բանի մը մէջ անգամ անոնց ստիպեն : Եւ թէ որ Եշրեղեցի մը այնպէս կը հասկընայ՝ թէ Պօղոս Կողեմացիներուն գրած վերի համարին մէջ քրիստոնեայներուն կը պատուիրէ որ իրցուցուցած յանցանքները ունեցողներուն հետ ճիշտ հաց ու կերակուր չուտեն , ան Եշրեղեցին ալ պէտք է որ Առաքեալին ըսածին պէս ընէ . ու սաստիկ պատուիրէ իր անդամներուն որ զի՞նովերու շնացողներու ագահներու բամբասովներու յափշտակողներու հետ , եւայլն , պատառ մը հաց ուստելու անգամ չ'մօտենան : Ու թէ որ հայր մը ասանկ զաւակ մը ունի պէտք է անոր ալ սաստիկ հրամայէ որ իր տղան տունէն դուրս ընէ . եւ կամ թէ որ կնիկ մը ասանկ էրիկ մը ունի , պէտք է անոր ալ ստիպէ որ իր էրիկէն զատուի : Աշխարհիս վրայ եկեղեցի մը կայ որ ասանկ կանոն մը կը պահէ . եւ

արդեզք միայն մէկ հատ մը կայ որ իր յանցաւոր անդամն ներուն հետ աս կերպովը կը վարուի . թէ որ չ'կայ ուրեմն ըսել է որ ամենեւին մէկ եկեղեցի մը վերը յիշուած համարին ասանկ մեկութիւն չ'ատր : **Ճ'շմարիար խօսելով** առ երկրորդ մէկնութիւնը շիտակ սեաելը բոլորովին սխալ է , քանիզի ամենեւին չ'նշանակեր թէ մի եւ նոյն ընտանեաց մեջն անդամները իրենց ունեցած բնական եւ հարկաւոր հազարդակցութիւն քակուելու են . հապա միայն մեղ կ'արդիլէ որ անանկ մարդոց անառակ վարուցը հետ բարեկամական ընկերութիւն կամ հաղորդակցութիւն չընենք , որ ասանկով անոնց շարութիւններուն ուժ տուած ու նաեւ ինքն զինքնիս անոնց գէշ գործքերուն նմաննելու փորձութեանը մէջ ձգած չոլլանք : **Ա հրը բերած բոլոր վկայութիւններնուս Եկեղեցին առած իշխանութիւնը մի միայն աս է որ ապականեալ վարք եւ ծուռ հաւատք ունեցող մարդիկը որոնք որ զջումի նշան մը չեն ցուցուներ , իր հաղորդութենէն կտրէ . եւ իր ժողովարդը անոնց հետ հաղորդակցութիւն ընելէն զգուշացունէ :**

**ԵՇա Կոտակարանին մէջէն աս նիւթիս վերաբերեալ բոլոր դասած վկայութիւններնիս ք'ննեցինք . եւ թէ որ ըլլան ուրիշներ ալ որ մենք սխալական մարդիկը ըլլալով զանց ըբինք , բայց աղէկ զիտենք թէ անանկ վկայութիւն մը չըլկոյ որ մեր յիշածներէն տարբեր նշանակութիւն մը ունենայ :**

**ՏԵՐԱՐՈՒՅՆ ՏԵՐՈՒՅՆ բնանուած նիւթելուան հայտապահ բովանդակութիւննելու :**

**Ա ինչեւ հիմա մեր խօսածները պայծառ կերպով հասարցունելու համար , աս տեղս կարճ խօսքերով անոնց միտքերը հասկցունենք :**

1. Թաէ ՚Վզիստոսի ՚Նկեղեցին ունեցած բոլոր կառավարութեան կանոններուն բուն դիտաւորութիւնը ՚Նկեղեցին մէք բութիւնը պահելու եւ յանցաւորներուն օգուածին համար են:

2. Թաէ ՚Նոր կտակարանը հոգեւոր յանցանքի համար մարմնաւոր պատիժ տալու ամենեւին մէկ կերպով մը հըրաման չ'տար, ամենէն մեծ պատիժը որ ՚Նկեղեցին իշխանութիւն ունի տալու՝ յանցաւորները իրեն անդամ ըլլալէն հանելն է:

3. Թաէ ՚Նոր կտակարանին մէջ չ'կայ անանկ խօսք մը՝ որ նշանակէ թէ ՚Նկեղեցիէն գուրս ձգուած մէկու մը հետ տնդթութիւնով վարուելու ենք, ու մարդասիրութիւն մը ցուցուելու չենք, եւ թէ անոր հետ մեր ունեցած ինչ եւ իցէ դրբի կամ առուտուրի հաղորդութիւնները կտրելու ենք:

4. Թաէ բանաղբելու իշխանութիւնը ամենեւին մարդոց չ'արուեցաւ, քանզի անիկայ միայն Շատուծոյ կը վերաբերի:

Ուստի թէ որ ՚Վահանայ մը կամ ՚Արդապետ մը ՚Նկիսկոպոս մը ՚Պատրիարք մը կամ ՚Պապ մը հոգեւոր յանցանք ընողի մարմնաւոր պատիժ կուտայ, այսինքն անիկայ բանալ կը գնէ կը ծեծէ կ'աքսորէ, կամ ժողովուրդը անոր վրայ կը զրդէ, ու խայտառակ անուններով կը նղովէ ու կը բանաղբէ որ հասարակութեան աշքին սաստիկ տակի երեւնալով կրցած անօրէնութիւննին անոր ընեն. կամ թէ անոր ապրուսալ խափանելու եւ ընտանիքը յետին խղճութեան մէջ ձգելու համար, բոլոր իր ՚Նկեղեցական ու աշխարհական իշխանութիւնովը ու կարողութիւնովը կը ստիպէ ուրիշներուն որ անոր ունեցած առուտուրի միջոցները կտրեն ու ամեն կողմէն զինքը նեղը ձգեն, եւ կամ թէ ինչ եւ իցէ կերպով անոր վախ կուտայ ու դատաւորական տան-

ջանքով մարմինը տանջել կուտայ, ան մարդը՝ Պրիստոսի  
ու Առաքեալներուն տուած հրամանին բոլորովին հակառակը  
կ'ընէ, ու Աստուծոյ առջեւը ճիշտ կերոն կայսրին կամ  
Յուլիանոսին եւ կամ Տրդատին դարձի գալէն առաջ ըրած-  
ին պէս Ճշմարիտ հալածիչ մընէ: Աստիկ ալ թէ որ մարդ  
մը՝ իրբեւ թէ Աստուծոյ առած իշխանութիւնով մը, ինչ  
եւ իցէ բանի համար թէ որ մէկը կը նզովէ, անիկայ մարդ-  
ոց չ'արուած իշխանութիւն մը իր վրայ առնելուն, կամ ա-  
ւելի աղէկ է ըսել Աստուծոյ ունեցած արտօնութիւնները  
իր վրայ առնելուն համար ծանր յանցանքի տակ է:

Եթէ զեցին անդամ ու լուսել հանելուն եւ բանադրանքին ու հա-  
լոծանքին մէջ եղած առաջնորդութիւնները:

Երկեղեցիէն հանելուն՝ կամ Եկեղեցիի անդամ եղողին  
վայրած արտօնութիւններէն զբկելուն, եւ հալածանքին ու  
ըանագրանքին մ. ջն տարբերութիւնները կարծեմ թէ մինչ-  
եւ հիմա ըրած քննութիւններնուս բաւական ցուցուցինք ։  
Եկեղեցիէն հանելը բոլորովին հոգեւոր բան մընէ ու մարմ-  
նաւոր պատիժի հետ ամեննեւին կապակցութիւն չունի: Այս-  
որ Եկեղեցիէն հանողը իր աշխարհային իշխանութիւնովը  
ասոր հետ կամաւ ինչ եւ իցէ կերպ մարմնաւոր պատիժ մը-  
կը գործածէ, անատենը անոր հալածել՝ կ'ըսուի: Եկեղե-  
ցիէն հանելը յանցաւորը Եկեղեցիին անդամ ըլլալէն զբկել  
է, բայց երբոր Եկեղեցական մը իր իշխանութիւնովը ան-  
մարդուն կամ անոր ստացուածքին վրայ նզովք ալ կը թա-  
փէ՝ որ միայն Աստուծուած կընայ ըսել, անատենը անոր բա-  
նագրել՝ կ'ըսուի:

Արօնական հալածանքը միշտ ատելի գործ մընէ, ու զար-

մահալին ալ աս է որ ամեն սաստիկ հալածիչներ իրենց անմեղ մարդիկներուն ըրած սոսկալի անօրէնութիւնները ծածկելու համար՝ միշտ իրենց անգլութեանը զոհ եղող խեղձերուն վրայ քաղաքական յանցանքներ ձգելու աշխատեր են : Ա սիկայ՝ ըսին՝ Վրիտոսի համար, կ'արգիլէ մեղ կոյսրին հարկ տալէն” . (Պատ. 19. 2. Յով. 12.) որ աս զբարատութիւնը վերջը Վոպեալներուն վրայ ալ ձգեցին . Գևրծ. 19. 5: “Ներոն քրիստոնեայներուն վրայ սա յանցանքը ձգեց, թէ Հռովմ կրակը տուողը անոնք էին : Դամետիանոս ամբաստանեց թէ անոնք ուրիշ թագաւորութիւն մը հանել կ'ուզէին ու իր Կայսերութիւնը յափրշտակել; Յուլիանոս՝ որ կը պարծենար թէ իր Տէրութեանը մէջ խղճմտանքի կատարեալ աղասութիւն տուած է, հազարաւոր քրիստոնեայներ բանար դրաւ աքսորեց ու նաեւ մեոցուց աս ամբաստանութիւնովը թէ անոնք իր օրէնքներուն հնազանդ չեն : Ու ասանկ աս օրերս ալ թէպէտեւ կան հալածիչներ, ան ալ Վրիտոսի պաշտօնեայ ըսուովներուն մ.ջը, բայց շատ կ'աշխատին որ չ'ցուցունեն թէ ըրածնին հալածանք է . ու միշտ կը ջանան մարդիկներուն հաւատցունել թէ իրենք հալածանք ընել չեն սիրեր : Եւ ինչ չու համար կ'ընեն աս բաները, վասն զի մարդուս խղճմշտանքը ասոր դէմ է, ու հասարակաց դատումն ալ կ'իմացունէ թէ հալածումը շատ անիբրաւ բան մըն է ու նաեւ բոլորովին իրաւունք չունենալով : Արբոր մէկը հանգարտ ու խաղաղասէր է, եւ իր Տէրութեանը օրէնքներուն հնազանդ, ու բոլոր իր զրացիներուն հետ ըրած գրգծերուն մէջ շխակ է, անհնարին է մարդոց միտքերը համողել թէ անիկայ իր կրօնական կարծիքներուն մէջ սխալմունք ունենալուն համար, որ կամ իրաւ է եւ կամ այնպէս կը կարծուի, բանար զրուելու ծեծի աքսորուելու եւ կամ մեռնելու արժանի է :

զի՞ն եւ ան մարդուն հսւատայ սխալմունքը պինտ զէշ մի՞նչ  
եւ անդամ անաստուածութիւն ըլլայ, քանի որ Տէրու-  
թեանը արդար օրէնքներուն նայելով իր վարքը աղեկ է՝  
երբոր միայն կրօնական սխալմունքին համար մէկը անիկայ  
պատժէ, մարդիկ անոր անիրաւ տեղը քաշածին վրայ կը-  
ցաւին, եւ կը վճռեն թէ անոր հալածիչներուն ըրածը բո-  
լորովին առանց իրաւունքի էր : Ու Վահարանը՝ որ բոլոր  
քաղաքական բաներու մ.ջ իշխանութիւններուն եւ կառա-  
վարութիւններուն հնազանդ ըլլալ կը սորվեցունէ, նուե  
ամեն տեղ կը հաստատէ թէ ՝ խղճմանքի վրայ տիրելը՝  
միայն Վատուծոյ կը վերաբերի : Մնորեալ մէկը համովելով  
ճշմարտութեան գարձունելու համար կինանք ամեն օրինա-  
ւոր միջրցները բանեցունել, բայց անիկայ թէ որ մեղի մը-  
տիկ չընէ, պէտք է ձգենք որ Վատուծոյ առջեւը իրեն համար  
հաշիւտայ . քանզի ովլ մեզ անոր վրայ դատաւոր կամ գահիձ  
դրաւ : Ու թէ որ մէկը կ'աշխատի ասանկ յանցաւոր մը ծեծովլ  
քանտը զնելով աքսորելով կամ ինչ եւ իցէ ուրիշ մարմ-  
նաւոր պատիժներով ետ գարձունել, անիկայ չէ թէ միայն  
անոր օգուտ մը չ'կրնար ընել, հապա թող գիտնայ որ բուն  
ինքինքին ու իր բոլոր գործերուն շատ վնաս պիտի ըերէ:  
Ըստութիւնը ու վախը երբեմն մարդիկ երեսանց կը հնա-  
զանդեցունեն, բայց մէկու մը կարծիքները բնաւ չեն կրնար  
փոխել . եւ ոչ ալ կ'աղջկեցին մաքրութիւնը պահելու հա-  
մար մինչեւ հիմա գէթ քիչ մը ողնութիւն ըբին :

Հայութութոյ ճշտուի ժողովութը բանակարգութեան ու հալա-  
ծունելուն մէջին վըտ :

Ունչեւ հիմա բոլոր ըսածներնուս մ.ջ ցուցուցինք թէ

Եկեղեցին մ.ջ երեւցած ամրարշտութիւնը եւ սխալմունք մաքրելու համար Վրիստոսի առած կանոնը ինչ է: Իսոլոր ան վկայութիւնները կըցուցունեն թէ պոռնիկներուն ագահներուն կռապաշաններուն բամբասողներուն զինովին յափշտակողներուն ու հերեաիկոններուն ինչ պէտք է ընել. թէ որ Վրիստոսի հրամանին պէս ( Անաթմ. Ժ. 1. ) ասոնց հետ պէտք եղած կանոններովը վարուելէն եսքը՝ տակաւին անդեղջ մնան, պէտք է անոնք Եկեղեցիէն հանել: Ուրեմն ինչ ըսենք ան Վահանային Վրիստոպոսին Պատրիարքին կամ Պապին համար, որոնք հարիւրաւոր հաղարաւոր ասանկ բնութիւն ունեցող մարդիկներ իրենց Եկեղեցին մ.ջը կը պահեն ու իրենց բոլոր կեանքին մ.ջ անոնցմէ մէկը չեն բանագրեր, բայց թէ որ իրենց հօսկն մ.ջ անանկ մէկը կոյ որ իր բոլոր սրտովը աս խաւարին գործքերէն կը գալիք, ու ազօթքով Աստուծոյ սուրբ Խօսքը կը կարդայ եւ կ'ուղէ որ անիկայ իրեն առաջնորդ ըլլայ ու աս վտանգաւոր աշխարհիս վրայ ինտոր վարուիլը իրեն սորվեցունէ, որ ամեն բանի մ.ջ Աստուծոյ առջեւը հաճելի գանուի ու յափառենական կեանքը ժառանգէ, անիկայ կը բանագրեն ու կը նզունն: Պինտ առաջ ցուցուցինք թէ անոնք մէկը բանագրելու կամ հալածելու իշխանութիւն չունին: Եւ երկրորդ՝ յայտնի է թէ Եկեղեցիէն գուրս ձգելու համար անոնց ունեցած իշխանութիւնը ան մարդիկներուն համար է, որոնք՝ Աստուծոյ խօսքին վկայութիւնովը կամ անառակ վարք ունին եւ կամ Վրիստոսի Աւետարանը կը խանգարեն ու բնաւ չեն ուղեր իրենց յանցանքը զըլ: Եկեղեցին պարտական է բոլոր ասանկ մարդիկը՝ Վրիստոսի կամունովը գուրս ձգել:

Աւստի եր, որ Վահանայ մը կամ Առաջնորդ մը թող կուտայ որ մոլի եւ անառակ վարք ունեցողները Եկեղեցի-

ին մէջ մնան, ու քրիստոնէական ամեն խորհուրդները աւ-  
նոնց կը մատակարարէ, ու միւս կողմէն անարատ վարք ու-  
նեցող մարդիկները կը նղովէ ու Եկեղեցիէն կը հանէ, ո-  
րոնց մի միայն յանցանքը ան է՝ որ սրտի մաօք Աստուածա-  
շունչը կը սորպին ու հաւատքի եւ գործի նիւթերու մէջ մի-  
այն անիկայ իրենց առաջնորդ բոնելու՝ ու անոր ետեւէն եր-  
թալու կը փափաքին, ան Կրտհանան կամ Առաջնորդը  
մող գիտնայ որ Կրիստոսի ճշմարիտ աշակերտները կը-  
րանազրէ ու կը նղովէ. եւ Կրիստոսի խօսքին նոյելով  
կը նանք ըսելթէ անիկայ բուն Կրիստոսը կը նղովէ: Առաջ.  
Խ. . 45: Կը սարսափինք երբոր կը խորհինք ան սոսկալի  
հետեւանքին վրոյ, որ թէ կանուխ եւ թէ ուշ պիտի իջ-  
նայ անոնց վրոյ՝ որ Կրիստոսի ճշմարիտ աշակերտները ա-  
ստնկ գուրս կ'ընեն ու կը նղովին: Ու ան ալ հերիք չ'սե-  
պելով բոլոր իրենց կարողութիւնովը ջանք կ'ընեն՝ որչափ  
որ կընան գաղտուկ կերպով, անոնք մարմինի ու ապրուստի  
նեղութիւններով տանջել ու չարչարել. որ ալ իրենց մեղ-  
քը ու դատապարտութիւնը անհնարին ծանր պիտի ըլլայ:  
Աստուած աս մեղքը անոնց չ'սեպէ. Աստուած տայ որ ա-  
մեն ասանկ մարդիկը տեսնան Հրեից աղքին Աստուածոյ սի-  
րելի Որդին հալածելնուն համար խրկուած սոսկալի պա-  
տիժները, ու նաև բոլոր ուրիշ դարերու մէջ Աստուածոյ  
զաւկէները հալածողներուն վրայ եկած թշուառութիւնը,  
ու խրատ ասնեն եւ շուառվ իրենց չար գործքերուն վրայ  
զլշան ու Տէրոջը դառնան:

Հայուծանքի վըայակ պարպահո ծողովուս ծանուցու հը:

Առոր աս ըսածներս չ'վերջացուցած կ'ուզեւր քանի մը

Խոսք ալ մտանաւորապէս համարակ ժողովուրդին խօսիլ : Գլուխ շատ անգամ ու մանաւանդ աս օրերս Աւետարանականներուն վրայով լսեցիք, թէ անոնք ամենէն գէշ վարք ունեցող մարդիկ են : Ենոնց համար ձեզի լսին թէ Վ.ը.ք.քիստոսի Աստուածութիւնը կ'ուրանան, եւ թէ անհաւատ ու անաստուած են, բայց մի հաւատք : Աւետարանական քրիստոնեայները անանկ հեռու են անհաւատութենէ՝ որ երկրիս երեսը մէկ ազգ մը չ'կայ որ այնչափ հեռու ըլլայ : Ենոնք Առորք Գ.իրքը այսինքն ձին ու Առոր Կտակարանը ամբողջ իրրեւ Աստուածոյ խօսքը կ'ընդունին . եւ անոր այնքան յարդութիւն կուտան, որ անկէց զատ ամենեւին ուրիշ գիրք մը իրրեւ իրենց հաւատքին ու գործքին անսխալ կանոնը չ'են ընդունիր : Կրենց ամեն օրուան սորվոծ բանը եւ ամեն օրուան զուարձութիւնը Աստուածաշունչն է : Ենոնք Վ.ք.քիստոսը իրրեւ ձօրը միածին Որդին կ'ընդունին շնորհքով եւ ճշմարտութիւնով լեցուն . եւ անիկայ ձօրը Աստուածութեանը հետ հաւասար ու երկրագութիւն ընդունելու արժանի կը հաւտան :

Չեզի լսին թէ Աւետարանականներուն գործածած Աւետարանը նոր Աւետարան մըն է ու չ'այսց Եկեղեցին Աւետարանէն տարրեր է : Ասիկայ ալ զրադարաւութիւն է : Աւետարանականները տեսնալով որ չ'այսց Եկեղեցիներուն մ.ջ կարգացուած Աւետարանը դրաբառ ըլլալուն շատ քիչ մարդիկ կը հասկընան, իրենք անոր աշխարհաբառ Թարգմանուածը կը գործածեն որ՝ ան լեզուն ամեն մարդ կը հասկընայ : Ասիկայ չէ թէ նոր Աւետարան մըն է, հասլա չ'այսրէն զրաբառ Աւետարանին աշխարհաբառ թարգմանուածն է, ճիշտ ան Աւետարանն է որ չ'այսց Եկեղեցիները կը կարգացուի :

Չեզի լսին թէ Աւետարանականները շատ գէշ մարդիկ

էն, եւ արժան է անոնք նախատել եւ դուրս ձգելու ամեն  
կերպով անոնք չարչարել, ինչու որ անոնք աղքը պառակ-  
առզ են: Աս ալ զբարտութիւն է: Վետարանականները  
իրենց աղքը մահէն զօրաւոր սիրով մը կը սիրեն, անոնք ի-  
րենց աղքը սիրելէն բնաւ չեն դադրիր եւ աղքին վնաս գա-  
շու համար գիտութեամբ բան մը չեն ըներ, հապա ընդհա-  
կառակն անոնք աղքին բուն աղքիութիւնը կ'ուղեն: Իրենց  
մեծ փափաքը ու աղօթքը առ Վստուած իրենց աղջին՝ իր-  
քեւ մէկ աղք, Վրիստոսի ետեւէն երթալը տնսնալն է, իր-  
քեւ իրենց մի միայն Վռաջնորդը: Ճշմարիտ է որ Վւ-  
տարանականները կրօնական կարծիքներու մէջ աղքին մեծ  
մասէն շատ տարբեր են, մանաւանդ հիմակուան ատենս.  
բայց ասկէց չ'հետեւիր թէ ան կարծիքները ճշմարտութե-  
նէ հեռու են, կամ թէ անոնք իրենց աղքին Եկեղեցիին  
ընդունած հանգանակին ետեւէն չերթալնուն համար իրենց  
աղքը կ'ատեն: Վրդեօք սուրբ Գրիգոր Լուսաւորիչը սը-  
խալմոնք ըրած եղաւ իր քրիստոնէութեան դառնալովը  
երբոր բոլոր աղքը հեթանոսութեան մէջ թաղուեր էր, եւ  
անոնց հետ կուռքերուն զօհելը մերժելուն համար մի թէ իր  
աղքը ատող եղաւ: Վրդարեւ ձեզմէ մէկն ալ չ'կրնար ա-  
նոր համար ասանկ բան մը կարծել, ուրեմն ինչ իրաւոնք-  
ով Վւտարանականներուն համար ասանկ կարծիք կ'ընէք:  
Ընոնց մի միայն փափաքը եւ գիտաւորութիւնը ան է որ  
Վստուծոյ օգնութիւնովը մարդոց բոլոր սխալմոնքները ձր-  
գեն ու Վստուծոյ ճշմարտութեանը ետեւէն երթան ուր որ  
տանի, ու բուն աս բանիս համար հաստատ յըս ունին թէ  
չարչարուելու եւ մեռնելու ալ կեցեր են:

Հատ անդամ ձեզի խրատեցին որ Վւտարանականնե-  
րուն կերպ կերպ անարդութիւններ ընէք, եւ անոնք աշ-  
խարհիս մէջի ամեն բանէն ալ ցած սեպէք: Եշ չենք զար-

մանար՝ թէ ձեր մէջը անանկ մարդիկ կան որ երբ իրենց  
քովոր ուժովը Աւետարանականները տանջելու ջանք կ'ընեն,  
անանկ կը կարծեն թե Աստուծոյ պաշտօն կը մատուցանեն :  
Պօղոս ալ իր կուրութեան ատենը ՞Ք.րիստոսի աշակերտ  
ներուն դէմ ըրածներուն համար ասանկ կը կարծէր : Ու  
գուք՝ երրոր ձեր Ակեղեցին վրայ ունեցած նախանձովը Աւ  
և տարանականները կը հալածէք, Ճիշտ Պօղոսի առջի Փարիս  
սեցի վարքին կընմանիք ու չէ թէ ետքի Քրիստոնէութեան  
վարքին : Երբ որ Պօղոս քրիստոնեայ եղաւ ալ մարդիկ հաւ  
լածելէն դադրեցաւ ու մանաւանդ թէ բուն ինք հալածուեցաւ .  
Պօղոս քար չնետեց, հապա ինք քարկոծուեցաւ . առ  
նիկայ տուն կամ խանութ չկոխեց, հապա քանի քանի հեղ  
մարդիկ իր վրան յարձակուեցան : Անդամ մը մտմտացէք  
քրիստոնէի մը ուրիշ իրեն պէս քրիստոնեայ մը քարուեց  
լուն վրայ, ան ալ սա բանին համար թէ անոր կրօնական  
կարծիքները իրեն ունեցածին պէս չեն :

Կարելի է որ աս տետրակը կարդացողներէն մէկը իր եղա  
րօրը գէմ աս չարութիւնները ըրեր է : Ուղղութիւն ըրէ  
ինծի որ քեզի բան մը հարցունեմ, երբոր քու Աւետարանա  
կան եղբայրդ կամ անոր տունը քարուեցիր՝ միթէ քու սիրութ  
ասովլ պաղչիեցաւ, ատիկայ աղէկ բան ճըն էր թէ գէշ . կամ  
թէ Աստուած ան ըրածիդ հաւնեցաւ թէ չէ : Անիկայ ընելովդ  
արգեօք աւելի Աստուծոյ հին ատենի ժողովուրդին՝ Առա  
քեալներուն ու մարտիրուններուննմաննեցար, որոնք հաւատ  
քի համար այնքան չարչարանքներ քաշեցին, թէ անոնց ան  
թանոս ու չըրէայ հալածիչներուն : Շոենք թէ քու նետած  
քարըդ վնաս մը տուաւ՝ անմեղ մարդուն գլուխը պատռեց,  
որ քեզի բան մը ըրած չէ, կամ թէ անոր ապրանքը վկասեց  
ու ընտանիքը վախի ու վտանդի մէջ ձգեց, քեզի ինչ հա  
ճութիւն եղաւ, կամ թէ ասկէց քու գործիդ ինչ օգուտ եւ

կաւ : թե որ ճշմարտութիւնը քու քովդէ է՝ անիկայ ճնշէ  
ցունելու համար քեզի քար ու մարմաւոր զենքեր պէտք չէ ։  
Քանի որ սասանկ դէշութիւններ կ'ընես՝ բոլոր աշխարհն  
այնքան պայծառ կ'իմացունես թէ քու քովդէ ճշմարտութիւն  
չկայ : “Վնոնց պտուղէն անոնք պիտի ճանշնաք” ըստ Փըք-  
կիչը . քու հաւատքիդ պտուղը թէ որ ուրիշներուն ապրան-  
քը լինասել ու անոնց կեանքը եւ մարմինը վսանգի մէջ ձբ-  
դել է, շատ յայնի է որ անիկայ Աւետարանին հաւատքը  
չէ : Դուն անոր քու ուղած անունդ տուր, բայց տակաւին  
անիկայ հեթանոսութենէ բնաւ սարբերութիւն մը չունի :  
“Վն որ բարի կ'ընէ՝ Աստուծմէն է, կ'ըսէ չովհաննէս Ա-  
ռաքեալը, եւ ան որ չարիք կը գործէ՝ անիկայ բնաւ Աստ-  
ուած չ'տեսաւ” : Գ. Ըստ. 11:

Դարձեալ ով քեզ եղբօրդ հաւատքին վրայ գատաւոր դը-  
րաւ, անիկայ Աւետարանին մէջ պայծառ ցուցուած Ճամրովը  
Աստուծոյ ծառայել կ'ուզէ, գուն որուն իշխանութիւնովը ա-  
նոր կը ստիպես որ կամ Աւետարանէն իր սորվածները ու-  
րանայ՝ ու քու հաւտացածիդ պէս հաւտայ, եւ կամ քար-  
ոտուի ու բոլոր աշխարհքին խայտառակ ըլլայ : Դուն կ'ու-  
զես որ քու բանած հաւատքիդ համար մէկը քեզ չ'արշա-  
րէ, ուրեմն ինչո՞ւ համար աս բանը քու եղբօրդ ալ չես ու-  
զեր : Ըսենք թէ դուն մէկու մը պարագ ունիս՝ որ Աւետա-  
րանական ըլլալուն համար բանազրուեր է, ի՞նչպէս չես ու-  
զեր ան պարտքդ վճարել : Արդեօք ատ բանը քրիստոնէի  
գործ է, միթէ ատիկայ ուրիշն անանկ ընել է, ինտոր որ  
կ'ուզես թէ մարդիկ քեզի ընեն : Քու պարտքդ իրաւ է,  
ստակը քուկդ չէ անորն է, եւ դուն անիկայ չես վճարեր ու  
կարելի է զինքը ու իր ընտանիքը՝ թէ որ ունի, կը թողուս որ  
ան ստակը կորմնցունելով պինտ ցաւալի խղճութիւններ  
քաշեն, մի միայն աս բանին համար որ անոր Աստուծոյ եր-

հրազդութեն ընելու համար ընդունած կերպը քու կինեց  
առարերէ է : Կամ թէ ըսենք որ Տշմագտութեան ու սրդա-  
բութեան գետ քանի մը անձնաաւէր թշնամիներէ զրգուե-  
լով ան մարդոց վրայ սուտ առնելիք ունեցող կ'ըլլաս, ու  
անիկայ շատ նեղութիւններու եւ ծախքի տակ կը ձգես . որ  
դուն աղէկ դիտես եւ Աստուած ալ դիտէ որ աս ըրածդ մէծ  
անօրէնութիւն է ու քու միտքդ մի միայն եղբայրդ չարչա-  
բել է, ինչու որ անիկայ չընդունիր ան հաւատքը որն որ գուն  
ընդուներ ես : Արդեօք տանկ բաներ ընելով ուրիշներուն  
հաւատքին վրայ տիրելու ինչ իրաւոնք ունիս, որ բուն Ա-  
ռաքեալները անդամ այսպէս իշխանութիւն մը ունենալ չե-  
ին ուղեր : Տ. Առքնէ . Ե. 24: “Պառն ով ես որ ուրիշնե  
ծառան կը դատես . իրեն Տէրոջը կը կենայ՝ կամ կ'իյնայ,  
բայց պիտի կենայ, ինչու որ Տէրը կարող է անիկայ հաս-  
տաեն” : Հառնէ . Ժ. 4: “Եօր կտակարանին մէջ ընառ  
չե՞ս կարդացեր թէ “Ո՞եզմէ ամեն մէկը Աստուածոյ հաշիւ  
պիտի տայ իր անձին համար” . (Հառնէ . Ժ. 12.) Թէ որ  
քու եղբայրդ սխալմունքի մէջ է՝ որուն չարչարանք ու վր-  
նաս տալու կը հոգնիս, Աստուած ժամանակին անիկայ պա-  
տասխան տալու պիտի կանչէ : Բայց գուն ալ միտքդ բեր որ  
չարչարուղներուն ու հալածուղներուն աղալակը Տէրոջը  
ակսանշներուն կը հասնին, եւ ան անշուշտ իր ժողովարդին  
նեղութիւն տուողներուն նեղութիւն պիտի հատուցանէ .  
Տ. Թէն . Ե. 6:

Կարելի է որ համանքդ բոլը աս բաները տղիտութիւնով  
ու չ'մոմտալով ըրիտ, բայց հիմա չե՞ս տեսնար որ ասկէց մի մի-  
այն գէշութիւն ելաւ, եւ ան գէշութիւնը մէկ մը Եկեղեցիիդ  
գործին եկաւ, ինչու որ քու ըրածներուդնայելով մէկը չ'հա-  
տար թէ Տշմարտութիւնը քու քովդ է, մէկ մըն ալ բուն քու  
անձիդ պիտի գայ, ինչու որ իրաւցունէ Աստուած քեզ շատ

սռաստիկ պիտի պատժէ իր անմեղ ժողովուրդը ասանկ չար..  
չարելուդ համար : Ուրեմն եկուր խօսքս մտիկ ըրէ ու ատանկ  
եղբայրդ հալածելու ատելի գործը ձգէ . քանզի ան ալ հան-  
գիստ ու նեղութենէ աղատ կեանք վարելու քեզի պէս իրաւ-  
ունք ունի : Աւ հաստատ միտքդ դիր որ մէկու մը վնաս հաս-  
ցունելու համար մէկմ'ալ քու ձեռքդ վեր չառնես եւ կամ  
լիզուդ չբանեցունես : Ու թէ որ ինչ եւ իցէ աստիճան կամ  
պաշտօն ունեցող մէկը քու միտքդ համոզելու ջանք ընէ ոք  
նորէն ասանկ բաներ ընելու ձեռք զարնես , ըսէ անոր թէ : Աս  
Վասուծմէ կը վախնամ եւ չեմ կրնար անանկ բան մը ընել  
որ ասանկ յայտնի կը տեսնամ թէ Վասուծոյ կամքին դէմ  
է : Ու միտքդ բեր թէ քանի որ Վասուծոյ կամքը ընելը  
կը փնտուես մարդոցմէ վախնալու բնաւ բան մը չունիս : Կա-  
րելի է որ երբ հալածիչն հետ մէկ ըլլալէն ետ քաշուխս  
ու անոր բանազրանք ըրած ատենը՝ Վամէն , չըսես , անիկայ  
դառնայ քեզ ալ հալածէ ու բանադրէ : Բայց մի վախնար  
մարդիկներէն որոնք ասօր կան ու վաղը չ'կան , ու որ իրենց  
պինտ ընելիքը միսցն մարմինը սպաննել է , հապա “ Աւելօք  
անկէց վախցիր՝ որ կրնայ հոգին ու մարմինը գեհեանին մէջ  
կորանցուանել ” . “ իրաւ կ'ըսեմ քեզի , Վակէց վախցիր ” :

## ՎՐԻՍՈՍՄԻ ՅԵՐՈՒԹԵՐԵՐ

ՈՒ ԵՆՈՐ ՊԵՐԵԳԵՆԵՐՈՒՆ ՎՐԵՅ

Ա. ՎՐԻՍՈՍՄԻ մարմինը կտաւներով ու խունկերով  
փաթտած ուրբաթ իրիկուն գերեզմանին մէջը դրուեցաւ .  
(Յուն . քթ . 40.) ու կնիկները իրենց բարեպաշտութիւն-

ով ու սիրովը ուրիշ խունկեր ու եղեր պատրաստեցին իր  
մարմինը օծելու համար։ Բայց որովհետեւ ան իրիկունը ուշ  
էր սպասեցին մինչեւ մէկարթի, շաբաթ օրը սուրբ պահե-  
ջու պատուիրանքին համար։ Պատկ. 19. . 56:

Ո. Անկշարթի օրը կանուխ լմնցուցին ան խունկերուն պատ-  
րաստութիւնը, այսինքն զանազան խունկեր ու եղեր մէկտեղ  
խառնեցին որ մէկ ազնիւ եղ մը շննեն Քրիստոսի մարմինը  
օծելու համար։ Անդի. Ժ. 1 :

Պ. Անոնք առտուանց մութնութւսին գերեզմանը եկան .  
(Անդր. . Ի. 1 : Պատկ. 19. . 1 : Յով. 1 : ) բայց Անր-  
կոս կ'ըսէ թէ մէկշարթի առտուանց կանուխ արեւը որ կը-  
ծագէր՝ գերեզմանը եկան . (Անդր. . Ժ. 2 : ) որ ըսել կ'ու-  
զէ թէ արեւը ծագելու վրայ էր :

Դ. Ան կնիկները որ եկան ասոնք էին, Անրիամ Անդ-  
դաղենացին, (Անդր. . Ի. 1 : Յով. 1 : 1 : ) ու Անրիամ  
Յովհաննան, ու Յակոբին մայրը, (Անդր. . Ի. 1 : Անդր. .  
Ժ. 40 : Ժ. 9. . 1 : Պատկ. 19. . 10 : ) ու Սողովմէ եւ Յովհան-  
նա ու ուրիշ կնիկներ, որոնց անունները արուած չեն :  
Անդր. . Ժ. 9. . 1 : Պատկ. 19. . 10 :

Ե. Անոնք որ Ճամբան էին ու գերեզմանը կ'երթային, ի-  
րարու կը հարցունէին ու կ'ըսէին թէ մէզի ան քարը ո՞վ  
պիտի դլտորցունէ գերեզմանին դուռնէն։ Անդր. . Ժ. 9. . 3 :

Զ. Երբոր հոն հասան իմացան թէ մէկ գետնաշարժ մը ե-  
ղեր էր ու քարը գերեզմանէն դլտորած էր։ Անդր. . Ի. 2 .  
2 : Անդր. . Ժ. 9. . 4 :

Է. Տէրոջը հրեշտակը իջեր էր ու դուռնէն քարը մէկ  
զի դլտորցուցեր ու անոր վրայ նստեր էր . ու պա-  
հապանները ասիկայ որ տեսան սարսափեցան ու մե-  
ռելի պէս եղան։ Բայց աս ատենս կնիկները տակա-  
ւին գերեզմանը հասած ու աս բաները տեսած չէին,

բայց ետքը հրեշտակը տեսան : Անդիւ . Իր . 2-4:

Եւ կյրոր տեսան որ քարը գերեզմանին դուռնէն վերցուած էր , Անրիամ Անդգաղենացին կարծելով թէ Յիսուսին մարմինը գողցեր են , շուտով միւս կնիկները ձգեց ու քաղաքը վազեց որ անիկայ աշակերտներուն պատմէ :

Յովէ . Ի . 2 :

Թ . Այւաները որ գերեզմանը մնացին ներս մտան որ մարմինն հոն չըլսալ աղէկ մը իմանան . Եւ հոն տեղը հրեշտակը երեւցաւ ու խօսեցաւ անոնց : Անդիւ . Իր . 5 : Անրի Ժ. 5 : Պատէ . Իր . 4 : Պուկաս կ'ըսէ թէ երկու մարդիկ լուսաւոր հազուստով իրենց հասան , կարելի է թէ առաջ միայն մէկը տեսան , որովհետեւ մութ տեղ մըն էր , բայց ետքը երկուքն ալ տեսան . կամ թէ ըսել կ'ուզէ որ միայն մէկը անոնց խօսեցաւ :

Ժ . Հրեշտակը ըսաւ անոնց որ շուտ մը երթան ու ըսեն աշակերտներուն թէ Յարութիւն առաւ ու անոնցմէ առաջ Գալիլեա պիտի երթայ : Անդիւ . Իր . 7 : Անրի . Ժ. 7 :

Ժ. Անոնք շուտով քաղաքը գարձան , բայց ուրիշ ճամբայէ երթալով Անրիամ Անդգաղենացին չ'հանդիպեցան . (Անդիւ . Իր . 8 : Անրի . Ժ. 8 . 8 : ) ու այնչափ վախացան եւ ուրախացան որ ճամբուն վրայ մէկու մը չ'խօսեցան , հասպա շխտակ Ռուսկեալներուն գացին ու ամեն բան անոնց պատմեցին : Անրի . Ժ. 8 : Պատէ . Իր . 9,10 : Պուկաս կ'ըսէ թէ Անրիամ Անդգաղենացին ու Յովհաննան եւ Յակոբին մայրը Անրիամը ու ուրիշները աս բաները Ռուսկեալներուն պատմեցին : Պատէ . Իր . 10 : Բայց պէտք չէ որ հասկընանք թէ աս կնիկներուն բոլորը մէկաեղ էին երբոր աս բաները պատմեցին : Կերեւայ թէ Անրիամ Անդգաղենացին երբոր մինակ գնաց քաղաքը միայն Պետրոսը ու Յովհաննէսը գտաւ . (Յովէ . Ի . 2 : ) ու ետքը երբոր

միւս կնիկները գացին միւս Առաքեալները գտան ու աս բառները անոնց պատմեցին :

Ժ. Երբոր մէկալ կնիկները գացած էին Անրիամ Անդ դաղենացին ուրիշ ճամբուլ գերեզմանը դարձաւ Պետրոսին ու Յովհաննէսին հետ , Յովհ. Ի. 2-9 : Ասոնք նայեցան ու գտան որ իրաւցունէ մարմինը հօն չէ . բայց չէին դիտեր թէ ինտոր եղաւ , որովհետեւ ան միւս կնիկները չէին տեսներ . ու Անրիամ Անդաղենացին ալ չէր դիտեր , որովհետեւ հրեշտակը տակաւին իրենց չերեւցած Անրիամ անոնք թողուց քաղաքը գնաց :

Ժ. Պետրոս ու Յովհաննէս երբոր տեսան թէ հօն չէ , դարձան քաղաքը . (Յովհ. Ի. 10:) բայց Անրիամ Անդ դաղենացին մինակ գերեզմանը մնաց :

Ժ. Երբոր մինակ հօն եր կուլար եւ նոյն ատենը գերեզմանին ներսը կը նայէր , ան երկու հրեշտակները տեսաւ որոնք միւս կնիկներուն երեւցան : Յովհ. Ի. 11-13 :

Ժ. Ան ատենը Յիսուս ալ Անրիամին եթեւցաւ : Անդէ Ժ. 9 : Յովհ. Ի. 14-18 :

Ժ. Անրիամ անատենը գնաց ու աշակերտներուն պատմեց բայց չհաւասարին : Անդէ . Ժ. 10-11 : Յովհ. Ի. 18 :

Ժ. Ետքը միւս կնիկներուն երեւցաւ Յիսուս ու ողջայն տուաւ անոնց : Անդէ . Ի. 9 :

Յիսուս մեռելներէն յարութիւն առնելէն ետեւ երեւցաւ  
Ի. Անրիամ Անդաղենացիին : Անդէ . Ժ. 9 : Յովհ.  
Ի. 14 :

Ի. Ան կնիկներուն : Անդէ . Ի. 9 :

Դ. Պետրոսին : Պատմ. բդ. 34: Ե. Կոբել. ձեւ. 5:  
Դ. Արկու աշակերտներուն որ Լոմմաւուս կ'երթացէն :  
Անդի. 12, 13: Պատմ. բդ. 13-32:  
Ե. Եղին օրը իրիկուան գէմ բոլոր Առաքեալներուն  
թառվաս հօն չեղած : Անդի. ձ.օ. 14: Պատմ. բդ. 36:  
Յակ. 1. 19-24: Ե. Կոբել. ձեւ. 5:  
Զ. Բոլոր Առաքեալներուն, թառվաս ալ չետերնին :  
Յակ. 1. 24-29:  
Ե. Գալիլեայի մէջ Տիբերիայի ծովին եղերքը Առաքեալ-  
ներուն, եւ ասիկայ երրորդ անգամն է որ իր աշակերտներ-  
ուն երեւցաւ, անոնք մէկտեղ ժողվուած : Յակ. Բ. 1-14:  
Բ. Տասնըմէկ աշակերտներուն Գալիլեայի մէջ լեռան մը-  
վրայ : Անդի. բդ. 16:  
Թ. Հինգ հարիւրէն եւել եղբայրներուն մէկտեղ : Ե.  
Կոբել. ձեւ. 6:  
Ժ. Յակոբին : Ե. Կոբել. ձեւ. 7:  
Ժ.Բ. Բոլոր Առաքեալներուն մէկտեղ ժողվուած : Ե. Կոբել.  
ձեւ. 7:  
Ժ.Բ. Համբարձման ատենը բոլոր Առաքեալներուն : Պատմ.  
բդ. 50, 51: Գայծ. Ե. 9, 10:  
Ժ.Գ. Պօղոս Առաքեալն : Գայծ. թ. 3, 4, 5: Բ. 8: Ե.  
Կոբել. ձեւ. 8:

ՅՐԻԱՏՈՍԻ ՄՐԱՋԱԿԱՐ, ՅՕՐՈՒԹ-ԹՎԱՔ

1. Ա՞հար, տեսայ փայտէն կախուած  
Ծատ ցաւի մէջ արիւնլուայք,  
Ինձ նայեցաւ աչքով տրտմած  
Քանի խաչն ես մօտեցայ:
2. Ենշուշտ՝ բնաւ ես չեմ մոռնար  
Են նայուածքը, քանզի կ'ըսէր,  
Իր մեռնիլը ինծի համար  
Թէպէտ ան խօսք մը չէր խօսեր:
3. Ո՛չ դդացի տրտմութիւնով  
Իմ մեղքերս՝ ու շատ լացի,  
Տեսայ որ ես մեղանչելով  
Իր մեռնելուն պատճառ տուի:
4. Վւա՛ղ, վայ ինձ, արդ անյօյս եմ  
Վրցունք թափած ես կանչեցի,  
Ո՞ւր տեղ երթամ, որո՞ւն վաղեմ  
Քանզի իմ Տէրս սպաննեցի:
5. Լրկրորդ անգամ գթած աչքով  
Տէրը խաչն ինձ նայեցաւ,  
Եւ իր շնորհքը յայտնելով  
Հաստատ սիրով ինծի ըսաւ:
6. “Ձրի շնորհքով ես կը քաւեմ  
•Քու մեղքերըդ որդեակ սիրուն,  
Յօժար կամքով մահ անձս կ'առնեմ  
Որ յաւիսեան միշտ ապրիս դուն”:

7. Արդ իր մահը երբոր այսպէս  
Յանցանքըս ինձ միշտ կը յայտնէ ,  
Նոյն իսկ ատեն ձրիապէս  
Իմ մեղքերէս իս կը սրբէ :

---

ՏԵՐՈՒՆԵՐԸՆ ԵԳ.ՕԹ.Ք


1. Ո՞վ բաղմագութ՝ այր երկնաւոր  
Վու անունըդ սուրբ ըլլայ ,  
Ու Տէրութիւնըդ փառաւոր  
Թող ամեն տեղ շուտով գայ :
2. «Քուկին օրհնեալ բարի կամքդ  
Որ երկնից մէջ միշտ կը լլայ ,  
Վն նոյն կամքդ Տէր Թռագաւոր  
Երկրիս վրայ ալ թող ըլլայ :
3. Ու Տէր այսօր ալ մեղի տուր  
Եմեն տւուր մեր հացը ,  
Որ անձերնիս զօրացուցած  
Օրհնենք Փրկիչ Աստուածը :
4. «Քու սկրելի Որդուոյդ համար  
Ո՞ի յիշեր մեր մեղքերը ,  
Որ շնորհաքըդ մենք ալ ներենք  
Ո՞եր եղքորը պարտքերը :

5. Հայր՝ տկար ենք, մեղ մի թողուր  
Որ փորձութեան մէջ լյնանք,  
Եւ մեղ ամեն ասեն փրկէ  
Որ մենք չարին որս չըլլանք:
6. Ինչու որ գուն ես թռադաւոր  
Դուն միայն Տէր զօրութեան,  
Շոլոր փառքը քեզ կը վայլէ  
Եւ ժըլմ եւ միշտ յաւիտեան:





ՆԱՐ ՏՊՈՒԵԿԸ ԳՐԱՅԵՐ



ԱՆԳԼԻԵՐԻ ՀԱՐԱԿԱՆԱՐԴԻՆ ՄԵԶ  
ԲԵՐՅԱՆԻՆ ԴԻՑԱԿՐԻՆ  
Գ. Հ ՅԱՎԱՐԻ ՄՐՋԱԿԱՆ ՄԵԾԱՐ  
ԸՆԾԵՐԾՈՒԹԻՒՆ ՀԵՅՍԱՆԱՆԱՅ ԸՆԾԵՐԾՈՒՆՅ ԱՆԱՀԱՅՈՑ







